

### SUMMARY

Criticizing three possible definitions of interpretation as “appropriation” in romantic hermeneutics and later in W. Dilthey’s conception, P. Riceour suggests a new understanding – by reader’s self-negation (the negation of the pseudo-Ego) receiving a genuinely spiritual human identity from the cultural texts, which have double-sense structure – literal and allegoric. By such conception of interpretation P. Riceour intends to liberate the hermeneutics from the definition of its being in the subjective twofold dependence – from the author and from the reader, by this way realizing hermeneutics as a genuine scientific subject in its more developed mode.

**Key words:** hermeneutics, interpretation, appropriation, spiritual closeness, interpretation, self-denial, criticism, absorption

### ԽԱՉԱՏՈՒՐ ԷՐՁՐՈՒՄԵՑՈՒ ԿՑԱՆՔԸ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ներսես Քոչարյան  
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի  
ասպիրանտ

Խաչատուր վարդապետ Էրզրումեցի Առաքելյանը ծնվել է 1666թ. Էրզրում քաղաքում: Ուսանության նպատակով 16տ. հասակում երիտասարդ Խաչատուրը մեկնում է Էջմիածին, որտեղ հանդիպում է կաթողիկ վարդապետ Վարդան Հունանյանին: Վերջինս նշանակալի դերակատարում է ունեցել Լեհաստանի հայկական համայնքի կաթողիկացման գործում: Սկզբնական շրջանում այս վարդապետը եպիսկոպոսի օգնականն էր, որը գնաց Լեհաստան այն ժամանակ, երբ հայերին բռնությամբ ստիպում էին կաթողիկություն ընդունել: Հունանյանը համարելով, որ նոր ստեղծվող կաթողիկ համայնքում ինքը կարող է առաջնային, իշխող դիրք գրավել, թողնում է եպիսկոպոսին մոտ իր հոգևոր ծառայությունը և դավանափոխ լինում: Այստեղ նա ծանոթանում է Կղեմես Գալանոսի հետ և դառնում նրա աշակերտը: Վերջինիս օգնությամբ Հունանյանը մեկնում է Հռոմ, որտեղ կաթողիկական կրթություն է ստանում «Պրոպագանդայի» դպրոցում: Ուսումն ավարտելուց հետո նա

պատրաստվում էր Լեհաստանի հայկական համայնքի առաջնորդ Նիկոլ արքեպիսկոպոսի մահից հետո ստանձնել հոգևոր առաջնորդի դերը: Մինչ եպիսկոպոսի մահը Հունանյանը մեկնում է Հայաստան իրեն հետևորդներ գտնելու նպատակով: Այստեղ է, որ 1682թ. նա ծանոթանում է պատանի Խաչատուրի հետ: Վերջինս, համաձայնելով Հունանյանի առաջարկին, գնում է Հռոմ, որտեղ ուսանելով Պրոպագանդայի դպրոցում, դառնում է կաթոլիկ քահանա<sup>1</sup>: Խաչատուր էրզրումեցին ունեցել է բեղուն ստեղծագործական կյանք, գրելով բազմաթիվ երկեր:

**Խաչատուր Արզրումեցի (Էրզրումեցի)** Առաքելյանի գրչին պատկանող հայտնի երկերն են

- Համառոտական Իմաստասիրութիւն, հ. 1-2, Վենետիկ, 1711,
- Կարճահամառոտ Բարոյական Աստուածաբանութիւն, Վենետիկ, 1709,
- Լիակատար Աստուածաբանութիւն, հ 1-2, Վենետիկ, 1734,
- Ներառումն առ քրիստոնեական կատարելութիւն, Վենետիկ, 1733,
- Կարճառոտագունեղ համառոտութիւն ընդհանրականի աստուածաբանութեան, Վենետիկ, 1736,
- Գիրք Քերականութեան, Լիվոռնո (Յալոկոնայ), 1669,
- Քարոզգիրք, Վենետիկ, 1710,
- Ճարտասանութիւն, Վենետիկ, 1713,
- Համառոտ մեկնութիւն երգ-երգոցն Սողոմոնի, Կոստանդնուպոլիս, 1700-1701:

Խաչատուր Էրզրումեցին, որպէս արդեն նորոժյալ վարդապետ, իր հետագա քահանայագործությունն ու կրթական գործունեությունը սկզբնական շրջանում ծավալում է Կոստանդնուպոլսում, որտեղ տեղի ծխական դպրոցում երեխաներին դասավանդում է քերականություն և կրթական իր գործունեության հետ մեկտեղ նաև քարոզում եկեղեցում: Ուսուցչական իր գործունեության ընթացքում, ծանոթանալով հայոց լեզվի դասավանդման խնդիրներին, սկսում է գրել իր առաջին գիտական աշխատությունը՝ «Քերականութիւն» խորագրով: Այս աշխատությունը հրատարակելու համար 1696թ. նա մեկնում է Իտալիա Լիվոռնո, որտեղ և նոր բացված հայկական տպարանում հրատարակում այն: Կարելի է ասել, որ այս աշխատությունը Էրզրումեցու առաջին քայլն էր իր նպատակի իրագործման ճանապարհին:

---

<sup>1</sup>Տե՛ս Լեռ, Երկերի ժողովածու, Եր., 1973, հ. 3, գ. 2, էջ 478:



«Քերականութիւն» երկի ներածությունում նա ընթերցողին ներկայացնում է իր նպատակների ու ապագա գիտական աշխատությունների ծրագրերի մասին. «*Ի վաղուց ջանայի ի գործ ածել զձեռս իմ, վասն եղբարց, վասն աշխատիլն հաճոյ է ինձ, և շահ.... Եւ դիտավորութիւն իմաստանօր է՝ ընձեռել մերայնոյ զամենայն զազատական արհեստս, և զամենայն գիտութիւնս, սկսանելով ի քերականութենէ, և վերջացնելով ի յաստվածաբանութեան: Նախ ուրեմն ճառելի է զքերականութիւն է, ապա հոետորական արհեստէ, և յետոյ զբանաստեղծութենէ, յետայնորիկ զփիլիսոփայութենէ, և ի վերջն զբոլոր աստվածաբանութեն է» (ընդգծումը՝ Ն.Ք.Բ): Այս ամենից հետո Խ.Էրզրումեցին ավելացնում է, որ չի սիրում երկարացնել ու դժվարացնել խոսքը, զգուշանում է ավելորդաբանությունից և ցանկանում է ճշմարտությունը բացահայտել բոլորին. «*Ձի ճշմարտութիւն ամենեցուն բացցի*» (ընդգծումը՝ Ն.Ք.Բ): Առաջ անցնելով՝ կարելի է ամրագրել, որ Էրզրումեցին իրոք իրագործել է այն ամենը, ինչի մասին գրում էր իր «Քերականութիւն» գրքի ներածության մեջ: Այս ամենից հետո Իտալիայից Խ.Էրզրումեցին վերադառնում է Կոստանդուպոլիս և շարունակում իր գործունեությունը: 17-րդ դարի վերջում Խաչատուր վարդապետը Կոստանդնուպոլսում արդեն մեծ համբավ էր վայելում և նրան անվանում էին «գիտական վարդապետ»:*

1698թ. Կոստանդնուպոլիս է գալիս երիտասարդ Մխիթար Մեբաստացին, որն արդեն նպատակ ուներ ստեղծելու միաբանություն: Լսելով Խաչատուր վարդապետի մասին՝ Մեբաստացին որոշում է դիմել գիտական վարդապետի օգնությանը՝ ստեղծելու միաբանությունը: Այս առաջարկին Խաչատուր Էրզրումեցին պատասխանում է. «*Մքանչելի մտածութիւն մէ այդ, բայց դժուարին և անիրագործելի՝ անհամար դժուարութեանց պատճառով, որոնց պիտի բախէր առաջին իսկ քայլէն. և այդ դժուարութեանց մեծագոյնն էր պակասութիւն դրամի, որ անհրաժեշտ պայման մէր գործին հաջողութեան*» (ընդգծումը՝ Ն.Ք.Բ): Մ.Մեբաստացին նույնիսկ առաջարկում է, որ միաբանության ղեկավարումը ստանձնի գիտական վարդապետը, սակայն վերջինս իր որոշման մեջ մնում է անփոփոխ: 1700-1701թթ. Կ. Պոլսում Մխիթար Մեբաստացին տպագրության է հանձնում Խաչատուր վարդապետի գրած «Համառօտ

<sup>2</sup>Տե՛ս Խաչատուր Էրզրումեցի, Քերականութիւն, Լիվոռնո (Յալովոնայ), 1669, էջ 7-8:

<sup>3</sup>Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup>Տե՛ս Թորոսյան Հ., Մխիթար արքայի վարքը, Վենետիկ, 1901, էջ 119:

մեկնություն երգ-երգոցն Սողոմոնի» աշխատությունը<sup>5</sup>։ Խ. Էրզրումեցին Կ. Պոլսի եկեղեցիներում քարոզների ժամանակ որոշում է կազմել մի աշխատություն, որի հիման վրա քահանաները և վարդապետները պետք է հավատացյալներին կարդային քարոզներ։ Այդ երկհատոր աշխատությունը նա տպագրության է հանձնում 1710թ. Վենետիկի տպարանում «Քարոզգիրք» անունով։ Աշխատության դիտավորությունն այն էր, որ քահանաներն ու վարդապետները ուսանեին հոետորակյան արվեստը և իմանային, թե ինչ է պետք քարոզել հավատացյալներին եկեղեցական տոների ժամանակ։ Գրքի տպագրությունից հետո նա մնում է Իտալիայում և շարունակում գիտական գործունեությունը։ Մեկ տարի անց՝ 1711թ. Վենետիկում տպագրվում է նրա հանրագիտական բնույթի աշխատությունը՝ «Բովանդակություն ամենայն ուսմանց» վերնագրով։ Այս խորագիրը բացատրելու համար հեղինակը տալիս է նաև երկրորդ անվանումը՝ «*Համառոտական իմաստասիրությունն, յորում պարունակին, որք հետևին, այսինքն, արուեստք, քերթողություն, ճարտասանություն, բանաստեղծություն, և տրամաբանություն, բնականաբանություն, ըստ ամենից իրոց մասանց, այսինքն, յաղագս մարմնոյ, յաղագս աշխարհի, և երկնի, յաղագս ծննդեան, և ապականութեան, յաղագս տարերաց, յաղագս անկատար խառնեցելոց, յաղագս կատարեալ խառնեցելոց, յաղագս տնկոց, յաղագս կենդանեաց, յաղագս մարդոյ, բժշկականություն, բարոյականություն, և քաղաքականություն. մաթեմաթիքա, ըստ ամենից իրոց մասանց, այսինքն, թուաբանություն, երկրաչափություն, աստղաբաշխություն, երաժշտություն, ընդհայեցողություն, և կրճորդաբանություն, և մեթափիսիքայն*» (ընդգծումը՝Ն.Բ.)։ Աշխատությունը երկհատոր է՝ յուրաքանչյուրը մոտ 700 էջ։ Հարկ է նշել, որ այս երկը հայկական մտքի պատմության մեջ ամենափառահեղ գործերից մեկն է և Գրիգոր Տաթևացուց հետո այդ ժամանակաշրջանի հայ կաթոլիկական ավանդույթում առաջին հանրագիտական բնույթի աշխատությունը, որտեղ խաչատուր Էրզրումեցին ներկայացնում և հայ իրականությունը էր ներմուծում՝ նոր գաղափարներ։ Աշխատության մասին Լեոն նշում է. «*Ասել է՝ գիտությունների մի ամբողջ ժողովածու, մի ամբողջ հանրագիտակ, որի վրա հայ ընթերցողը պիտի խելամուտ լիներ...*» (ընդգծումը՝Ն.Բ.)։ Վարդապետն իր աշխատության սկզբնամա-

<sup>5</sup>Տե՛ս նույն տեղում, էջ150։

<sup>6</sup>Տե՛ս Համառոտական իմաստասիրություն, Վենետիկ, 1711, հ. 1, էջ 1։

<sup>7</sup>Տե՛ս Լեոն, Երկերի ժողովածու, Եր., 1973, հ. 3, գ. 2, էջ 479։



սում ներկայացնում է արվեստի մասին իր գաղափարը՝ ասելով, որ այն բաժանվում է երկու մասի՝ ծառայականի և ազատականի: Ծառայականի մեջ նա նշում է հողագործությունը, զինվորությունը, խոհարարականը, ճարտարապետականը, նավավարականը, վաճառականությունը և այլն: Ազատականի մեջ՝ բանաստեղծությունը, թվաբանությունը, երկրաչափությունը, երաժշտությունը, բժշկությունը, հոե տորությունը, քերականությունը, բարոյականությունը, քաղաքականությունը և այլն: Նա գրում է, որ «ազատական» արվեստն օգնում է հասարակությանը. *«Օգնեն հասարակի բարոյ: Ջի ի թիկունս հասանին հասարակութենէ»*: Արվեստի բացատրությունից հետո նա ավելի մանրամասն է ներկայացնում վերոթվարկյալ արվեստները:

Գնահատելով Խ. Էրզրումեցու ժառանգությունը՝ մենք կարևոր ենք համարում նշել, որ նա իր ժամանակի հայ մշակույթի պատմությունում այն հանրագիտակ հեղինակն էր, որի «Համառոտական իմաստասիրութիւն» աշխատությունն իրենում ներառել էր իր ժամանակի բանական արվեստների ու գիտությունների բազում բնագավառներ՝ սկսած պոետիկայից մինչև բնական գիտություններ: Հատկանշական է, որ 1713թ. տպագրվում է Խ. Էրզրումեցու «Ճարտասանութիւն» խորագրով աշխատությունը, որի մեջ հեղինակը սահմանում է, թե ինչ է հոե տորական արվեստը. *«Հոե տորութիւն, որ և ճարտասանութիւն, ճոխաբանութիւն, փաստաբանութիւն, ճարտարախոսութիւն, ճոռմութիւն, ճարտարութիւն, և ատենաբանութիւն ասի, սապէս սահմանի ի հոե տորաց, արհեստ բարոյք ասելոյ: Այսինքն, է՝ մին ազատական արհեստ, որ ուսուցանէ մեզ զբարոյք ասելն: Արդ բարոյք ասելն ոչ այլ ինչ է, եթե ոչ զարդարել զբանս, և զճառս իւր, զեղեցկախօսութեամբ. և զեղեցիկ պատճառանօք: Ուստի նա՝ է՝ ասելի ճարտասան, և հոե տոր, որ զեղեցկայարմար, և բանականապէս խօսի»* (ընդգծումը՝ Ն.Բ.Ք): Այնուհետև, Վենետիկում լույս են տեսնում նրա աստվածաբանական աշխատությունները «Լիակատար Աստուածաբանութիւն» երկի 1-ին հատորը 1729թ., իսկ երկրորդը՝ 1734թ.: Այստեղ պետք է նշենք, որ դեռևս 1709թ. վարդապետը տպագրել էր «Համառոտութիւն Բարոյականի աստուածաբանութեան» աշխատությունը, որը հանդիսանում է «Լիակատար Աստուածաբանութեան» նախնական տարբերակը: Հետագայում Խ. Էրզրումեցին շարունակում է իր աշխատանքները և 1733թ. Վենետիկ-

<sup>8</sup>Տե՛ս Խաչատուր Էրզրումեցի, Ճարտասանութիւն, Վենետիկ, 1713, էջ 4:

կում տպագրում «Ներածումն առ քրիստոնեական կատարելութիւն» և 1736թ. «Կարճատապագունեղ Համառօտութիւն Շնորհանրականի Աստուածաբանութեան» երկերը: Այս երկու աշխատությունները էրզրումեցիներ գրել է լատիներեն, և դեռ իր կյանքի օրոք դրանք թարգմանվել են հայերեն Մարիամ Քարաքաշյանի կողմից: Վերջինիս մասին հայտնի է միայն, որ ծնվել է Կոստանդնուպոլսում, ապրել է Վենետիկում և, ինչպես ինքն է նշում, միանձնուհի է եղել կուսանոցում: Հատկանշական է, որ հայ գրականության պատմության մեջ՝ մինչ Մարիամ Քարաքաշյանը, հայտի են եղել միայն երկու կին, որոնք ստեղծագործել են 8-րդ դարում և մեզ նույնիսկ նրանց անունները հայտնի չեն<sup>9</sup>:

Իս.էրզրումեցիների մահացել է 1740թ. Վենետիկում՝ 74 տարեկան հասակում՝ մեզ թողնելով բազմաբովանդակ և ուսուցողական բնույթի աշխատություններ: Էրզրումեցիներ աշխատություններ է գրել նաև բանաստեղծական չափածո ոճով: Վարդապետը գտնում էր, որ բանաստեղծության առարկա կարող են դառնալ և՛ ֆիզիկական, և՛ կենդանաբանությունը, և՛ մաթեմատիկական, և՛ բոլոր այլ գիտությունները, և՛ աստվածաբանությունը, և՛ իմաստասիրությունը իր ամենայն մասերով՝ տեսական ու գործնական, որում նաև հասարակականը: Այդ առիթով Լեոն գրում է. «*Պոեզիայի կոչումն ու ներգործությունը նա կապում է բարոյական խնդիրների հետ՝ ասելով, որ արվեստի նպատակն է նպաստել հասարակության առաջընթացին, ծառայել բարոյական դաստիարակության խնդիրներին: Արդարացնելու համար այս տեսությունը նա գրում է իր աշխատությունները ուսանավորի ձևով: Դա բավականին դժվար աշխատանք էր, սակայն մենք կարող ենք ասել, որ դա նրան հաջողվել է*» (ընդգծումը՝ Ն.Բ.)<sup>10</sup>:

Նկատի ունենալով Էրզրումեցու պոեզիայի գաղափարական առանձնահատկությունը, նրան համարում են հայ կլասիցիզմի հիմնադիրներից մեկը: «*Էրզրումեցիով է սկսվում հայ գեղագիտության կլասիցիստական շրջանը*», - նշում է Թադևոսյանը<sup>11</sup>: Լինելով հայ կլասիցիզմի ռահվիրա, վարդապետը ազգային պետականության, բացակայության պայմաններում ազգային ինքնության պահպանման համար քրիստոնեական ինքնությամբ, հոգևոր-մշակութային ու կրթական գոր-

<sup>9</sup>Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, Եր., 1973, հ. 3, գ. 2, էջ 482:

<sup>10</sup>Նույն տեղում, էջ 480:

<sup>11</sup>Տե՛ս Թադևոսյան Մ. Հ., Հայկական կլասիցիզմի տեսությունը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1977, էջ 21:



ծունեությամբ հայ ժողովրդի դարեր շարունակ մղված պայքարի օրինակով, հայերեն լեզվի անցյալը մոռացված գրաբարի քերականությունը, դարձնելով ներկա իր ստեղծագործական լեզվագործունեության մեջ, ձգտել է բարոյական ինքնության ու առաքինի կյանքի, քրիստոնեական իմաստության բանական գաղափարներով ու հայրենասիրության ոգով դաստիարակել ժամանակակիցներին ու հետագա սերունդներին: Հանրագիտարանային իր երկերում Խաչատուր Էրզրումեցին անդրադարձել է մարդկային ու ազգային կյանքի հոգևոր, բարոյական, կրթական, սոցիալական, քաղաքական բազմաբովանդակ խնդիրներին, գիտական, իմաստասիրական ու աստվածաբանական, ինչպես նաև քերականական, հոետորական արվեստների իր հայացքների չափածո շարադրանքով բացորոշելով աստվածային ու մարդկային, լեզվական ու մշակութային իրողությունների իսկությունը և մարդկային կենսակերպում քրիստոնեական իմաստության հոգեկենսաբար, պիտանավոր և հենց փրկաբանական նշանակությունը:

### ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված է XVIIդ. կաթոլիկ հայ մեծանուն վարդապետի, հայ կլասիցիզմի նշանավոր ներկայացուցիչի՝ Խաչատուր Էրզրումեցու կյանքն ու ստեղծագործական գործունեությունը: Հենվելով անտիկ ու միջնադարյան փիլիսոփայության, իրեն ժամանակակից եվրոպական գիտության ձեռքբերումների վրա, նա ստեղծել է ունիվերսալ, հանրագիտարանային աշխատություններ աստվածաբանության, տեսական ու գործնական փիլիսոփայության, հայոց լեզվի քերականության վերաբերյալ: Նրա երկերում ներկայացված է էթիկայի, հասարակության սոցիալական ու քաղաքական կյանքի հետևողականորեն մշակված քրիստոնեական հայեցակարգ, որի բուն նպատակն է պետականությունից զրկված հայ ժողովրդի հոգևոր ինքնագիտակցության ներկրթությունն ու կատարելագործումը, քրիստոնեական կենսակերպի արմատավորումը, եվրոպական մշակութային արժեքներին հասանելի լինելու համար պայմանների ստեղծումը:

**Բանալի բառեր**-ստեղծագործություն, արվեստ, քարոզ, Վենետիկ, Կոստանդնուպոլիս, վարդապետ

**ЖИЗНЬ И ТВОРЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ХАЧАТУРА  
ЭРЗРУМЦИ**

**Нерсес Кочарян**  
*Аспирант Армянского Государственного  
Педагогического Университета им. Х. Абовяна*  
**РЕЗЮМЕ**

В статье представлены жизнь и творчество выдающегося армянского мыслителя католического вероисповедания XVIIIв., представителя классицизма-Хачатура Эрзрумеци, который опираясь на достижения античной и средневековой философии, современной ему европейской науки, создал универсальные, энциклопедические труды по богословию, теоретической и практической философии, грамматики армянского языка. В его сочинениях представлена последовательно разработанная христианская концепция этики, социальной и политической жизни общества, целью которой является образование, смосовершенствование духовного самосознания лишенного государственности армянского народа, укоренение христианского образа жизни, создание условий доступности европейских культурных ценностей.

**Ключевые слова:** сочинение, искусство, проповедь, Венеция, Константинополь, вардапет (учитель).

**THE LIFE AND WORK OF KHACHATUR ERZRUMETSI**

**Nerses Kocharyan**  
*Phd student of Armenian State Pedagogical  
University after Kh. Abovyan*

**SUMMARY**

This article represents the life and works of the prominent Armenian catholic thinker of the XVIII century, distinguished founder of Armenian classicism Khachatur Erzurumetsi. On the basis of philosophy of Antiquity and Middle Ages and the European science of his time, he created universal encyclopedic works in theology, theoretical and practical philosophy and Armenian grammar. In his works the systematic Christian ethical teaching is presented as well as the conception of the social and political life of the society the goal of which was the education and self-development spiritual self-consciousness of the Armenian nation deprived of its statehood, enrooting of the Christian life-mode, providing conditions for adopting European cultural values.

**Key words:** essay, art, sermon, Venice, Constantinople, vardapet (teacher, Archimadrit).